ՀՀ ֆինանսների նախարարություն

2025 ԹՎԱԿԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 • **Ընդհանուր նկարագրություն**

2 • **Համախառն ֆինանսական կարիքն ու պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները**

3 • **Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը**

3.1 • **Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով** *(թողարկման, տեղաբաշխման ու հետգնման հիմնական սկզբունքներ ու 2025 թվականի տեղաբաշխման աճուրդների օրացույց)*

3.2 • **Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով** *(մասհանումների ծրագիր)*

3.3 • **Պակասուրդի ֆինանսավորումն արտարժութային պարտատոմսերով** *(եվրապարտատոմսերի տեղաբաշխումներ ու մարումներ)*

4 • **Կառավարության պարտքի մարումն ու սպասարկումը**

5 • **Կառավարության պարտքը 2025 թվականի տարեվերջին**

1. Ընդհանուր նկարագրություն

Փոխառությունների տարեկան ծրագրում ներկայացված են փոխառու միջոցների հաշվին ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ծավալները և կառուցվածքը, 2025 թվականի ընթացքում ՀՀ կառավարության պարտքի մարման և սպասարկման նկարագիրը, ինչպես նաև 2025 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության պարտքը և այն բնութագրող ցուցանիշները:

2025 թվականի փոխառությունների տարեկան ծրագիրը մշակվել է կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների ռազմավարական ծրագրի նպատակադրումներին, ուղենշային ցուցանիշներին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կազմման համար կիրառված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակները:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական ցուցանիշները.

Ցուցանիշներ	2025թ. (պետբյուջե)
ՀՆԱ, մլրդ դրամ	10,891.5
Իրական աճ, %	5.1
ՀՆԱ-ի դեֆլյատոր, %	2.5
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	2,837.6
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	26.1
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	3,441.6
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	31.6
Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	(604.0)
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	(5.5)

2. Համախառն ֆինանսական կարիքն ու պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հարկաբյուջետային շրջանակի համաձայն՝ համախառն ֆինանսական կարիքը կկազմի 1,372.2 մլրդ դրամ, մասնավորապես.



Նախատեսվում է համախառն ֆինանսական կարիքի 51 տոկոսն ապահովել ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների հաշվին, իսկ 49 տոկոսը՝ արտաքին փոխառությունների հաշվին: Կանխատեսվում է, որ համախառն ֆինանսական կարիքը կծածկվի հետևյալ աղբյուրների հաշվին.

- պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտք – 699.9 մլրդ դրամ,
- արտաքին աղբյուրներից ներգրավված վարկերի գծով մուտք - 478.7 մլրդ դրամ
- արտարժութային պարտատոմսերի գծով մուտք - 193.6 մլրդ դրամ:

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի պակասուրդը կկազմի 604.0 մլրդ դրամ և նախատեսվում է այն ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորել 255.4 մլրդ դրամով, իսկ արտաքին աղբյուրների հաշվին՝ 348.6 մլրդ դրամով:

Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներն են.

Ֆինանսավորման աղբյուրներ, մլրդ դրամ	**2025թ. (պետբյուջե)**
Ընդամենը	**604.0**
այդ թվում՝	
Ներքին աղբյուրներ	**255.4**
որից	
Փոխառու զուտ միջոցներ	**291.4**
գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	699.9
գանձապետական պարտատոմսերի մարում / հետգնում	(408.5)
մուրհակների մարում	-
Ֆինանսական զուտ ակտիվներ	**(36.0)**
բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում	(0.2)
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	(32.2)
կայունացման դեպոզիտային հաշվի համալրում	(3.6)
Արտաքին աղբյուրներ	**348.6**
որից	
Փոխառու զուտ միջոցներ	**357.8**
վարկերի և փոխատվությունների ստացում	478.7
նպատակային վարկերի գծով	217.3
բյուջետային աջակցության վարկերի գծով	261.3
ստացված վարկերի և փոխատվությունների մարում	(182.1)
արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր	193.6
արտարժութային պարտատոմսերի մարում / հետգնում	(132.3)
Ֆինանսական զուտ ակտիվներ	**(9.2)**
վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ)	0.4
բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում և այլն	(9.6)

3. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման պարտքային գործիքակազմը

2025 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 649.2 մլրդ դրամ, որն ըստ գործիքների կբաշխվի հետևյալ կերպ.

- ✓ պետական գանձապետական պարտատոմսեր՝ 291.4 մլրդ դրամ (44.9 տոկոս),

- ✓ արտաքին վարկեր՝ 296.6 մլրդ դրամ (45.7 տոկոս),
- ✓ արտարժութային պարտատոմսեր՝ 61.2 մլրդ դրամ (9.4 տոկոս):

3.1. Պակասուրդի ֆինանսավորումը պետական գանձապետական պարտատոմսերով

(թողարկման, տեղաբաշխման ու հետգնման հիմնական սկզբունքներ և 2025 թվականի տեղաբաշխման աճուրդների օրացույց)

ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ նպատակ ունենալով հարթեցնել պարտքի մարման գրաֆիկը և նվազեցնել վերաֆինանսավորման ռիսկը, ինչպես նաև բարձրացնել տեղաբաշխվող պարտատոմսերի իրացվելիությունը և նպաստել երկրորդային շուկայի զարգացմանը:

Պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության նվազման պայմաններում աստիճանաբար կավելացվի երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների ծավալը՝ դրանք կենտրոնացնելով 10 տարի մարման ժամկետի շուրջ՝ որպես հիմնական ուղենիշ:

Պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման միջոցով կշարունակվի շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կոնսոլիդացիան՝ կրճատելով դրանց քանակը:

Կիրականացվի գնաճով ինդեքսավորվող պարտատոմսերի դեբյուտային թողարկում:

Պետական բյուջեով նախատեսված որոշակի ոլորտներում առանձին նախագծերի ֆինանսավորման նպատակով կդիտարկվի նպատակային պարտատոմսերի թողարկման հնարավորությունը:

Կարևորելով պետական գանձապետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ կընդլայնվի մանրածախ առցանց հարթակի (gp.minfin.am) հասանելիությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ևս ապահովելու և ոչ ռեզիդենտների մուտքը պետական գանձապետական պարտատոմսերի շուկա առավել մատչելի դարձնելու համար:

Կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ քայլերին զուգահեռ, կշարունակվեն հանրային իրազեկման աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում:

Պետական գանձապետական պարտատոմսերով բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է կարճաժամկետ (1 տարի), միջնաժամկետ (3 և 5 տարի), երկարաժամկետ (10

և 30 տարի) պարտատոմսերի վերաբացումների և խնայողական (6 ամիս, 1, 2 և 3 տարի) պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով:

Յուրաքանչյուր երկու ամիսն առնվազն մեկ անգամ կկազմակերպվի 52, 39, 26 և 13 շաբաթ մինչև մարում ժամկետ ունեցող պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդներ:

2025 թվականի ապրիլի 29-ին կթողարկվեն 3 և 5 տարի մարման ժամկետայնությամբ նոր միջնաժամկետ պետական գանձապետական պարտատոմսեր: 2025 թվականի ընթացքում կտեղաբաշխվեն 2035 թվականի հոկտեմբերի 29-ին մարման ենթակա (10 տարի) և 2054 թվականի հոկտեմբերի 29-ին մարման ենթակա (30 տարի) երկարաժամկետ պարտատոմսերը, որոնց թողարկումն իրականացվել է 2024 թվականի հոկտեմբերի 29-ին:

3 և 5 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի նվազագույն ծավալը, որպես կանոն, 25 մլրդ դրամ է:

10 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի նվազագույն ծավալը, որպես կանոն, 50 մլրդ դրամ է:

30 տարի մարման ժամկետով պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի նվազագույն ծավալը, որպես կանոն, 20 մլրդ դրամ է:

Պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների օրացույց

Հունվար 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
1			1	2	3	4	5
2	6	7	8	9	10	11	12
3	13	14	15	16	17	18	19
4	20	21	22	23	24	25	26
5	27	28	29	30	31		

Փետրվար 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
5						1	2
6	3	4	5	6	7	8	9
7	10	11	12	13	14	15	16
8	17	18	19	20	21	22	23
9	24	25	26	27	28		

Մարտ 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
9						1	2
10	3	4	5	6	7	8	9
11	10	11	12	13	14	15	16
12	17	18	19	20	21	22	23
13	24	25	26	27	28	29	30
14	31						

Ապրիլ 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
14		1	2	3	4	5	6
15	7	8	9	10	11	12	13
16	14	15	16	17	18	19	20
17	21	22	23	**24**	25	26	27
18	28	29	30				

Մայիս 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
18				1	2	3	4
19	5	6	7	8	9	10	11
20	12	13	14	15	16	17	18
21	19	20	21	22	23	24	25
22	26	27	28	29	30	31	

Հունիս 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
22							1
23	2	3	4	5	6	7	8
24	9	10	11	12	13	14	15
25	16	17	18	19	20	21	22
26	23	24	25	26	27	28	29
27	30						

Հուլիս 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
27		1	2	3	4	5	6
28	7	8	9	10	11	12	13
29	14	15	16	17	18	19	20
30	21	22	23	24	25	26	27
31	28	29	30	31			

Օգոստոս 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
31					1	2	3
32	4	5	6	7	8	9	10
33	11	12	13	14	15	16	17
34	18	19	20	21	22	23	24
35	25	26	27	28	29	30	31

Սեպտեմբեր 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
36	1	2	3	4	5	6	7
37	8	9	10	11	12	13	14
38	15	16	17	18	19	20	21
39	22	23	24	25	26	27	28
40	29	30					

Հոկտեմբեր 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
40			1	2	3	4	5
41	6	7	8	9	10	11	12
42	13	14	15	16	17	18	19
43	20	21	22	23	24	25	26
44	27	28	29	30	31		

Նոյեմբեր 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
44						1	2
45	3	4	5	6	7	8	9
46	10	11	12	13	14	15	16
47	17	18	19	20	21	22	23
48	24	25	26	27	28	29	30

Դեկտեմբեր 2025							
Շաբաթ	ԵՐԿ	ԵՐՔ	ՉՐՔ	ՀՆԳ	ՈՒՐԲ	ՇԲԹ	ԿԻՐ
49	1	2	3	4	5	6	7
50	8	9	10	11	12	13	14
51	15	16	17	18	19	20	21
52	22	23	24	25	26	27	28
53	29	30	31				

- կարճաժամկետ պարտատոմսեր
- միջնաժամկետ պարտատոմսեր
- երկարաժամկետ պարտատոմսեր

Ոչ աշխատանքային օրեր

Հունվարի 1-2	Ամանոր	Ապրիլի 24	Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր	Մայիսի 28	Հանրապետության տոն
Հունվարի 6	Սուրբ Ծնունդ և Հայտնություն	Մայիսի 1	Աշխատանքի օր	Հուլիսի 5	Սահմանադրության օր
Հունվարի 28	Բանակի օր	Մայիսի 9	Հաղթանակի և խաղաղության տոն	Սեպտեմբերի 21	Անկախության տոն

Որպես կանոն, յուրաքանչյուր եռամսյակի երրորդ ամսին կտեղաբաշխվեն 3 տարի մարման ժամկետով պարտատոմսեր, յուրաքանչյուր եռամսյակի երկրորդ ամսին՝ 5 տարի մարման ժամկետով պարտատոմսեր, հունվար և հուլիս ամիսներին՝ 10 տարի մարման ժամկետով պարտատոմսեր, ապրիլ և հոկտեմբեր ամիսներին՝ 30 տարի մարման ժամկետով պարտատոմսեր:

Աճուրդների կողմնորոշիչ ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ:

Յուրաքանչյուր աճուրդին տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը, որպես կանոն, կհրապարակվի աճուրդի ամսաթվին նախորդող ամսվա վերջին տասնօրյակում՝ գործակալների հետ խորհրդակցելուց հետո:

Կարող են իրականացվել պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներ, ընդ որում մինչև 3 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ կարող են իրականացվել կանխիկ հոսքերի կառավարման նպատակով, իսկ 3-12 շաբաթ մարման ժամկետայնությամբ թողարկումներ՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում:

Ապրիլի 29-ը և հոկտեմբերի 29-ը, որոնց վրա կենտրոնացված են արժեկտրոնային պարտատոմսերի տոկոսավճարներն ու մարումները, հանդիսանում են աճուրդների պահուստային օրեր:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, բացառիկ դեպքերում, ելնելով փոխառության կարիքից և շուկայի միտումներից կարող է հայտարարել լրացուցիչ աճուրդի օրեր, չեղարկել աճուրդի օրերը:

Շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի կոնսոլիդացիայի, դրամային պարտատոմսերի վերաֆինանսավորման ռիսկի կառավարման նպատակով 2025 թվականին կիրականացվեն փոխանակման աճուրդներ: Ներքին պետական պարտքի գործիքակազմի ընդլայնման շրջանակներում կիրականացվի գնաճին կցված պարտատոմսերի պիլոտային թողարկում:

2025 թվականի ընթացքում, ըստ անհրաժեշտության, կիրականացվեն նաև պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումներ: 2025 թվականի ընթացքում

պարտատոմսերի հետգնումների 70-80%-ը կիրականացվեն մարման գրաֆիկի հարթեցման, իսկ 20-30%-ը՝ պարտատոմսերի իրացվելիությունը խթանելու նպատակով: Որպես կանոն, պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումները կիրականացվեն միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների օրերին: ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր թողարկման պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում այդ պարտատոմսերի հետգնում չի իրականացնի:

ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am պաշտոնական կայքում եռամսյակային կտրվածքով, յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ, կհրապարակվի ուղենշային համարվող պարտատոմսերի ցանկը:

Յուրաքանչյուր ամսվա նախավերջին հինգշաբթի օրը կկազմակերպվի հանդիպում գործակալների հետ: Յուրաքանչյուր եռամսյակի երրորդ ամսվա երկրորդ հինգշաբթի օրը կկազմակերպվի հանդիպում պետական պարտատոմսերի շուկայի այլ ինստիտուցիոնալ մասնակիցների հետ:

3.2. Պակասուրդի ֆինանսավորումն արտաքին վարկերով (մասհանումների ծրագիր)

ՀՀ 2025 թվականին պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար նախատեսվում է արտաքին վարկերի գծով կատարել 478.7 մլրդ դրամի (1,236.3 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ: Ընդ որում, մասհանումներից 217.3 մլրդ դրամը (561.3 մլն ԱՄՆ դոլար) նախատեսվում է կատարել նպատակային վարկային ծրագրերի գծով, իսկ 261.3 մլրդ դրամը (675 մլն ԱՄՆ դոլար)՝ բյուջետային աջակցության վարկերի գծով:

2025 թվականի համար ծրագրավորված բյուջետային աջակցության վարկերի ներգրավման ուղենշային ծավալներն ըստ դոնորների հետևյալն են.

- Ասիական Զարգացման Բանկ – մինչև 150 մլն եվրո,
- Զարգացման Ֆրանսիական Գործակալություն – մինչև 150 մլն եվրո,
- Կայունացման և Զարգացման Եվրասիական Հիմնադրամ – 100 մլն ԱՄՆ դոլար,
- Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ - 200 մլն ԱՄՆ դոլար,
- ՕՊԵԿ հիմնադրամ – մինչև 75 մլն եվրո:

3.3 Պակասուրդի ֆինանսավորումն արտարժութային պարտատոմսերով

2025 թվականին կապիտալի միջազգային շուկաներում նախատեսվում է իրականացնել պետական արտարժութային պարտատոմսերի նոր թողարկում՝ 500 մլն ԱՄՆ դոլար ուղենշային ծավալով: Տարվա ընթացքում մարման ենթակա արտարժութային պարտատոմսերի ծավալը կազմում է 313.17 մլն ԱՄՆ դոլար:

4. Կառավարության պարտքի մարումը և սպասարկումը

2025 թվականին կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կպահանջվի 1,117.1 մլրդ դրամ, որից 723.0 մլրդ դրամը կկազմեն պարտքի գծով մարումները, իսկ 394.1 մլրդ դրամը՝ տոկոսավճարները:

	մարում	*սպասարկում*	*ընդամենը*
Պետական գանձապետական պարտատոմսեր	408.5	253.2	661.7
Արտարժութային պետական պարտատոմսեր	132.3	32.4	164.7
Արտաքին վարկեր	182.1	108.5	290.6
Ընդամենը	**723.0**	**394.1**	**1,117.1**



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի տոկոսավճարների և մարման համար նախատեսված միջոցները ենթակա են ՀՀ դրամի փոխարկման 2024թ. նոյեմբերի 1-ի դրությամբ

արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքներով, որն էլ ընկած է հաշվարկների հիմքում: Սակայն, հաշվի առնելով պարտքի գծով վճարումների պատշաճ և անխափան կատարման կարևորությունը, պարտքի մարումների և տոկոսավճարների նկատմամբ կիրառվում են որոշակի ճշգրտման գործակիցներ՝ փոխարժեքի հնարավոր տատանումների ռիսկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով:

Պետական գանձապետական պարտատոմսերի մարման համար նախատեսված 408.5 մլրդ դրամի մեջ 30 մլրդ դրամը կազմում է պարտատոմսերի հետգնումների համար ծրագրավորված գումարը:

Արտաքին վարկերի մարման և սպասարկման գծով նախատեսվում է վճարել 685.6 մլն ԱՄՆ դոլար: Նախատեսվող վճարումների կառուցվածքն ըստ վարկատուների հետևյալն է.

մլն ԱՄՆ դոլար

	տոկոսավճար	**մարում**	**ընդամենը**
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	73.4	32.2	105.6
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	16.0	70.0	86.0
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	10.8	10.0	20.8
Եվրոպական Ներդրումային Բանկ	4.0	6.8	10.8
Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.4	3.7	4.1
ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ	7.9	4.6	12.5
Ասիական Զարգացման Բանկ	52.5	53.8	106.3
Եվրամիություն	2.4	-	2.4
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	6.0	112.6	118.6
Եվրասիական Զարգացման Բանկ	12.4	22.2	34.6
Գերմանիա (ՎՎԲ)	14.8	47.1	61.9
Ռուսաստանի Դաշնություն	6.9	40.1	46.9
Ֆրանսիա	11.9	11.3	23.3
ԱՄՆ	0.1	1.7	1.8
Ճապոնիա	1.0	7.6	8.7
Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ	0.0	0.6	0.7
Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ	0.3	1.5	1.8
ԿԲՍ Բանկ (Բելգիա)	0.0	0.5	0.6
Ռայֆայզն Բանկ (Ավստրիա)	0.0	0.9	1.0
Էռստե Բանկ (Ավստրիա)	0.1	0.7	0.7
Ենթակա է հստակեցման	36.5	-	36.5
Ընդամենը	**257.5**	**428.0**	**685.6**

5. Կառավարության պարտքը 2025 թվականի տարեվերջին

Ըստ կանխատեսումների՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 5,910 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 54.3 տոկոսը և 2024 թվականի տարեվերջի համեմատությամբ ՀՆԱ-ի նկատմամբ կաճի 4.4 տոկոսային կետով: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նշված կանխատեսումները տարբերվում են կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով սահմանված ցուցանիշներից՝ պայմանավորված հիմնականում կանխատեսումներում կիրառված մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակի, փոխարժեքների տարբերություններով ու կառավարության պարտքի գծով գործառնություններով:

	31.12.2023թ.	31.12.2024թ.	31.12.2025թ.
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	4,572.0	5,038.5	5,910.4
ՀՀ կառավարության պարտք, մլն ԱՄՆ դոլար	11,294.6	12,647.9	13,962.9
ՀՀ կառավարության պարտք, % ՀՆԱ-ի նկատմամբ	48.4	49.8	54.3

Պարտքի կառավարելի մակարդակում պահպանմանը զուգահեռ ՀՀ կառավարությունը կշարունակի պարտքի պորտֆելի բարելավման ջանքերը՝ նպատակ ունենալով պահպանել դիմակայունությունը հնարավոր ցնցումներին, ապահովել պետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և խորացումը, մշտական հասանելիությունը ներքին ու արտաքին ֆինանսական շուկաներին, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների ու գործիքների դիվերսիֆիկացումը:

Այս տեսանկյունից ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին արժույթով պարտքը կշարունակի պահպանվել պատմականորեն բարձր մակարդակներում, կշարունակվեն արտաքին ներդրողների մոտ պարտատոմսերի շուկայի գրավչության պահպանման ջանքերը, ինչպես նաև կընդլայնվի միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցությունը:

Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.









Տոկոսավճարների բեռն էական չավելացնելու, ինչպես նաև պետական բյուջեի արտարժութային մուտքերի կարիքն ապահովելու նպատակով, 2025 թվականի տարեվերջին՝ 2024 թվականի կանխատեսումային մակարդակների նկատմամբ, ներքին պարտքի և դրամային պարտքի մասնաբաժինները պարտքի կառուցվածքում կնվազեն համապատասխանաբար 2.0 և 2.2 տոկոսային կետով: Այնուամենայնիվ, ներքին պարտքի և դրամային պարտքի մասնաբաժինները 2025 թվականին կպահպանվեն պատմականորեն բարձր մակարդակներում:

Հաշվի առնելով ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումները և պարտքի գծով ծրագրավորված գործառնությունները, ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված ուղենշային ցուցանիշները 2025 թվականի տարեվերջի դրությամբ կկազմեն.

	Ուղենիշ	2025թ.
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	7 – 10 տարի	7.6 տարի
Առաջիկա երեք տարվա ընթացքում մարման ենթակա պարտքի տեսակարար կշիռ, %	առավելագույնը 35%	24.8%
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) առավելագույն կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	13.2
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	78.6%
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 40%	47.5%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 40%	46.6%

ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցները բաշխվել են այնպես, որ պահպանվի ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշռի նվազագույն 40% ուղենիշը: Միաժամանակ, հաշվի են առնվել 2025-2027թթ. հարկաբյուջետային շրջանակի առանձնահատկությունները, այդ թվում՝ աճող ֆինանսական կարիքի պայմաններում ներքին շուկայի հագեցվածություն չառաջացնելու մղումը և արտարժութային ելքերի առկայությունը: Այս պայմաններում, չնվազեցնելով ներքին պարտքի շուկայում ակտիվությունը, անհրաժեշտություն է առաջացել որոշակիորեն նվազեցնել գանձապետական պարտատոմսերի տարեկան զուտ թողարկումների ծավալը:

2025 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.